# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2008 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը շարունակելու է իրականացնել արտասահմանյան երկրներում գործող հայկական վարժարաններում, դպրոցներում, մանկապարտեզներում, միօրյա և այլ տիպի կրթօջախներում դասավանդող հայագիտական առարկաների ուսուցիչների վերապատրաստման մեկամսյա ծրագիրը:

Վերապատրաստումն ընթանալու է Երևանում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված տարբերակված ծրագրերով: Դասընթացներն ավարտած ուսուցիչներին կտրամադրվեն համապատասխան վկայագրեր, ինչպես նաև ուսումնամեթոդական գրականություն, դասագրքեր և այլ նյութեր:

Ծրագրի ընթացքում դասընթացների, ուսուցիչների կեցության և շրջագայության ծախսերը ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը: Ճանապարհածախսը հոգում են մասնակիցները կամ համապատասխան կազմակերպությունները, կրթօջախները, բարերարները:

Դասընթացների սկիզբը նախատեսված է հուլիսի 20-ին:

Ծրագրի ժամանակացույցը հետևյալն է.

*20 հուլիսի՝* *դասընթացների բացում*
*17 օգոստոսի՝* *վկայագրերի հանձնում*

Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև հունիսի 30-ը ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացնել.

1. Ուսուցչի կողմից լրացված և կրթօջախի տնօրենության կողմից վավերացված հայտը,
2. Համայնքի, հաստատության կամ կազմակերպության կողմից տրված գործուղման տեղեկանք:

Նախապատվությունը տրվելու է Հայաստանում վերջին երեք տարիների ընթացքում չվերապատրաստված ուսուցիչներին:

Մասնակիցների համար նախատեսվում են նաև հանդիպումներ, ճանաչողական-ուսուցողական շրջայցեր և մշակութային ծրագիր:

Կից ներկայացվում են մասնակցության հայտի ձևը և վերապատրաստման ուսումնական ծրագրերի առարկայական ցանկերը (նախագիծը):

Հայտեր ներկայացնելու վերջնաժամկետը հունիսի20-ն է:

Հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ ՀՀ կրթության և գիտության նախարարության Սփյուռքի հետ կապերի բաժնից

Հեռ. 374 10 58-13-91
ֆաքս. 374 10 52-52-07
Էլ. փոստ: spyurq@yahoo.com կամ info@edu.am

ՀՀ կրթության և գիտության
նախարար՝ Ս.ՍԵՅՐԱՆՅԱՆ